

Անոտացիա
Մասնագիտությունը
06.05.01 Կենսաինժեներիա և կենսաինֆորմատիկա

Առարկա «Մանրէաբանություն»

<p>Առարկայի նպատակը</p>	<p>Ուսանողների գիտելիքների ձևավորում՝ ընդհանուր մանրէաբանության տեսական հիմունքների, մանրէների էկոլոգիայի, կենսոլորտում մանրէների դերի վերաբերյալ, ինչպես նաև կենսաստեխնոլոգիայի բնագավառում մանրէների կիրառման մասին: Առարկայի գործնական պարապմունքների նպատակն է մանրէաբանական լաբորատորիայում աշխատելու հմտությունների ձևավորումը, ծանոթությունը մանրէաբանական հետազոտությունների հիմնական մեթոդներին, ինչպես նաև մանրէների գենոմների անոտացիայի փորձի ձեռք բերումը:</p>
<p>Առարկայի փոխկապակցված է ուսումնական ծրագրի այլ առարկաների հետ</p>	<p>Ե1.Բ.23 «Մանրէաբանություն» առարկան հանդիսանում է «Կենսաճարտարագիտություն և կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ մասնագիտական ուսուցման պարտադիր առարկա: Ե1.Բ.23 «Մանրէաբանություն» առարկան փոխկապակցված է ուսումնական ծրագրի այլ առարկաների հետ, քանի որ այն ստեղծում է անհրաժեշտ գիտելիքների բազա այնպիսի առարկաների յուրացման համար, ինչպիսիք են իմունաբանությունը, վիրուսաբանությունը, գենետիկական ճարտարագիտությունը և մանրէների կենսաճարտարագիտությունը:</p>
<p>Առարկան ուսումնասիրելուց հետո ստացած հմտությունները, գիտելիքները, կարողությունները</p>	<p>Առարկայի ուսումնասիրության արդյունքում ուսանողը պետք է.</p> <ul style="list-style-type: none"> - Իմանա՝ ընդհանուր մանրէաբանության տեսական հիմունքները, - Կարողանա՝ օգտվել ուսումնական և տեղեկատու գրականությունից, տիրապետել մանրէաբանական լաբորատորիայում աշխատելու հմտություններին, կատարել մանրէների կուլտիվացման և մանրադիտարկման հետ կապված հիմնական գործողություններ, - Պատկերացում ունենա՝ կենսոլորտում մանրէների դերի վերաբերյալ, կենսաստեխնոլոգիայի բնագավառում մանրէների կիրառման մասին, մանրէաբանության զարգացման մեջ կենսաինֆորմատիկայի կարևոր դերի մասին, - Տիրապետի՝ ինտերնետ ռեսուրսների օգտագործման հմտություններին՝ մանրէների գենոմներում հակաբիոտիկակայությունության և վիրուլենտության գենետիկական հիմունքների բնութագրման նպատակով:
<p>Նկարագրությունը</p>	<p>Դասընթացը ներառում է դասախոսություններ, որոնց արդյունքում ուսանողները ձեռք կբերեն գիտելիքներ՝ ժամանակակից մանրէաբանության առարկայի և խնդիրների, բակտերիաների և արխեաների տիրույթների, ինչպես նաև էուկարիոտ միկրոօրգանիզմների և վիրուսների ներկայացուցիչների կառուցվածքի և կենսագործունեության ընդհանուր օրինաչափությունների մասին: Ուսանողները կծանոթանան մանրէների ժամանակակից դասակարգման սկզբունքներին, որոնք հիմնված են բազմաֆազային տաքսոնոմիայի վրա: Դասընթացը ներառում է կենսոլորտում, ինչպես նաև կենսաստեխնոլոգիայի մեջ մանրէների դերին նվիրված բաժիններ: Առարկայի շրջանակներում կներկայացվեն բժշկական մանրէաբանական</p>

	<p>Էկոլոգիայի հիմունքները, ինչպես նաև իմունիտետի և նրա տեսակների դրույթները: Ուսանողները պատկերացում կկազմեն Ժամանակակից մանրէաբանության զարգացման մեջ կենսահինֆորմատիկայի կարևոր դերի մասին:</p>
--	---